ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ՀՆՀ)

Ամսաթիվը՝ **24 փետրվարի, 2023թ.**

Պայմանագիր՝ **EFSD -W/7/2023**

EFSD -W/8/2023
EFSD դրամաշնորհ

Ծրագրի անունը՝

«Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների կիրառում և «Կանաչ էներգետիկայի» աջակցման ծրագիր

1. Հայաստանի Հանրապետությունը **Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամից (EFSD)** ստացել է դրամաշնորհ **Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների կիրառում և «Կանաչ էներգետիկայի»** աջակցման ծրագիր ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը հանրային օբյեկտներում էներգախնայողության ներդրումների անհրաժեշտ վճարումները կատարելու համար՝ **Լոտ 1. EFSD -W/7/2023 - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ -ում, Լոտ 2. EFSD -W/8/2023 «Լոռու մարզպետարանի շենք» ՓԲԸ-ում էներգախնայողության միջոցառումների իրականացում:**
2. **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը** հրավիրում է ներկայացնել հայտեր հետևյալ **հանրային օբյեկտում էներգախնայողության միջոցառումների իրականացման** համար՝ **Լոտ 1. EFSD -W/7/2023 - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ -ում, Լոտ 2. EFSD -W/8/2023 «Լոռու մարզպետարանի շենք» ՓԲԸ-ում էներգախնայողության միջոցառումների իրականացում:** Հայտատուները կարող են հայտ ներկայացնել մեկ լոտի կամ երկու լոտերի համակցության համար: Հայտերը յուրաքանչյուր լոտի համար կգնահատվեն առանձին, այնպես որ մեկից ավելի լոտերի համար հայտ ներկայացնելիս պետք է պատրաստվեն և ներկայացվեն առանձին հայտեր յուրաքանչյուր լոտի համար: Նմանապես, զեղչը (եթե առկա է) պետք է առաջարկվի յուրաքանչյուր լոտի համար: Ցանկացած համակցված զեղչ երկու լոտերի համար հաշվի չի առնվի հայտերի գնահատման ժամանակ: Յուրաքանչյուր լոտի համար կկնքվի մեկ պայմանագիր:
   Մրցութային փաթեթը հայերեն կարող եք ձեռք բերել **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամից (R2E2 Հիմնադրամ)՝** ուղարկելով նամակ-խնդրանք հետևյալ էլ. հասցեին zaruhi.gharagyozyan@r2e2.am**:** Մրցութային փաթեթի թղթային տարբերակը կարող եք ստանալ՝ վճարելով **50,000 ՀՀԴ R2E2** Հիմնադրամի ստորև նշված հաշվեհամարին և ներկայացնելով հաշիվ-ապրանքագիր (թղթային տարբերակը պետք է ներկայացնել **R2E2** Հիմնադրամ, կամ բնօրինակի սկանավորված տարբերակը ներկայացնել էլ. հասցեին) **Հայաստանի**

վերականգվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ: Մրցութային փաթեթի էլեկտրոնային տարբերակը կարող էք ստանալ անվճար, էլ. փոստի միջոցով: Հետաքրքրված հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկատվություն նույն հասցեից:

3. **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը** կկազմակերպի նախամրցութային ժողով **2023 թվականի մարտի 13-ին:** Ժողովի ընթացքում կհստակեցվեն Հայտերի պատրաստման հետ կապված բոլոր հարցերը: Նախամրցութային ժողովին չմասնակցելը հիմք չի հանդիսանալու հայտը մերժելու համար:
4. Հայտերը պետք է ուժի մեջ լինեն Հայտը բացելուց հետո 90 օրվա ընթացքում և ուղեկցվեն **Հայտի ապահովման հայտարարագրով:**
   Մեկից ավելի լոտերի համար հայտ ներկայացնելիս յուրաքանչյուր լոտի համար պետք է ներկայացվի առանձին **Հայտի ապահովման հայտարարագիր**:
5. Գնումները կիրականացվեն դրամաշնորհային պայմանագրով ԿՋԵՀ-ի կողմից՝ համաձայն ֆինանսավորվող ծրագրերի գնումների քաղաքականությանը (փոփոխության է երթարկվել 2018թ. նոյեմբեր), և ԿՋԵՀ-ի կողմից ֆինանսավորվող գնումների ընթացակարգի (փոփոխության է երթարկվել 2018թ. նոյեմբեր 21), որը հրապարակվել է -ի կայքում՝ (https://efsd.eabr.org/about/documents/policies_and_procedures/):
6. Մրցույթը բաց է բոլոր հայտատուների համար իրավասու երկրներից, ինչպես սահմանված է Մրցութային փաստաթղթերում ԿՋԵՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերին և որոնք համապատասխանում են որակավորման պահանջներին:

Որակավորման չափանիշները ներառում են.

- Հաջողակ Հայտատուի կողմից վերջին երեք (3) տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը համապատասխան լոտի համար պետք է կազմի՝
  ա) Լոտ 1**: 48,237,429 ՀՀԴ**
  բ) Լոտ 2: **45,579,857 ՀՀԴ**

- Գլխավոր կապալառուի փորձը. վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ ծավալի, բնույթի և բարդության աշխատանքների նվազագույնը երկու պայմանագիր (ջեռուցում, օդափոխություն, օդի լավորակում, ԷԽՄ, ՖՎ), /այս պահանջին համապատասխանելու համար աշխատանքները պետք է 70 տոկոսով ավարտված լինեն/.
  ա) Լոտ 1: **13,131,300 ՀՀԴ յուրաքանչյուր պայմանագրի համար**
  բ) Լոտ 2: **12,407,850 ՀՀԴ յուրաքանչյուր պայմանագրի համար**

- Շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ յուրաքանչյուր լոտի համար, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝
  ա) Լոտ 1: **5,359,714 ՀՀԴ**
  բ) Լոտ 2: **5,064,429 ՀՀԴ**

Մեկից ավելի լոտի համար հայտ ներկայացնելիս Մասնակիցները պետք է բավարարեն համապատասխան լոտերի ընդհանուր նվազագույն պահանջները՝ որակավորվելու և մեկից ավելի լոտերի (պայմանագրի) շնորհվելու համար:

7. Հայտերը պետք է ներկայացվեն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, մինչև **2023թ. մարտի 24-ը, ժամը 15:00:** Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում:
8. Ուշացած հայտերը կմերժվեն և կվերադարձվեն փակ վիճակում հայտատուներին: Հայտերը կբացվեն մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ:

Տեղեկություններ մրցութային փաստաթղթերի տպագիր պատճենը ստանալու համար.

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և
էներգախնայողության հիմնադրամ
ՀՎՀՀ 02580459
Հատուկ հաշիվ 2050422345051002
Ինեկոբանկ ՓԲԸ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և
էներգախնայողության հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0019, Սայաթ-Նովա 29/1
Հեռ: + /374 10/ 545-121
Էլ. Փոստ: zaruhi.gharagyozyan@r2e2.am
Ինտերնետային հասցե: www.r2e2.am